ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատվել է

ԵՊԲՀ Հոգաբարձուների խորհրդի

____.____.2020 թվականի

թիվ ____ որոշմամբ

Հոգաբարձուների խորհրդի

Նախագահ՝

_____

2021-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՊԲՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան 2020

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (այսուհետև Համալսարան) ուսումնական և գիտական ուղղվածության բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը առողջապահության ոլորտի որակյալ և միջազգային չափորոշիչներին համապատասխան կադրերի պատրաստումն է՝ նպատակ ունենալով հանրության առողջության պահպանմանը, ամրապնդմանը և բարելավմանը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Համալսարանը ձգտում է դառնալ կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում միջազգային ճանաչում վայելող տարածաշրջանային առաջատար բուհ: Համալսարանն իր գործունեությամբ ձգտում է.

- Ապահովել կրթական այնպիսի միջավայր, որտեղ, ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներից և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներից ելնելով, հնարավոր է կազմակերպել որակյալ բժշկական բարձրագույն և հետբուհական կրթություն
- Ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրացիների սոցիալական ամենատարբեր խմբերի համար սովորելու մատչելի պայմաններ,
- Կատարելագործել ուսուցման մեթոդաբանությունը և բարելավել ուսումնագիտական և ուսումնաարտադրական համալիրների գործունեությունը
- Ապահովել գիտության առաջընթացին, հասարակական և տնտեսական փոփոխություններին և աշխատաշուկայի պահանջարկին արագ ու համարժեք արձագանքման գործընթաց
- Ապահովել կրթական և հետազոտական գործընթացներին ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրում

- Իրականացնել գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտություններ՝ բժշկական, բնական և հասարակագիտական-հումանիտար գիտությունների բնագավառում
- Իրագործել կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական համակարգի և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, շարունակական մշտադիտարկման, նրանց վերանայման ու լրամշակման հստակ ձևակերպված ծրագրեր
- Խթանել բուհի որակի ապահովման մշակույթի զարգացումը
- Ապահովել կրթական և հետազոտական գործընթացներին ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը
- Իրագործել լիարժեք մասնագիտական առաջընթացի և առողջապահության կառավարման համակարգի համար իրազեկ մասնագետների պատրաստում
- Բոլոր աշխատողների համար ապահովել ֆինանսական կայունություն և սոցիալական երաշխիքներ
- Առաջնորդվել ռազմավարական նշանակություն ունեցող համընդհանուր հեռանկարով՝ ուղենիշ ունենալով գիտակրթական համակարգի միջազգայնացումն ու եվրոպական չափորոշիչներին ինտեգրումը
- Ապահովել ուսանողների բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը
- Իրականացնել հետբուհական և լրացուցիչ կրթական ծառայություններ
- Մասնագիտական խորհրդատվություններ տրամադրել շահառուներին
- Տրամադրել լրացուցիչ շարունակական կրթություն և մասնագիտական խորհրդատվական ծառայություններ՝ հանրային պահանջարկին համապատասխան
- Ապահովել բուհի հաշվետվողականությունը, գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության մատչելիությունը բոլոր շահակիցների համար

Համալսարանը պարտավոր է

- Հավատարիմ մնալ իր ավանդույթներին, ապահովել բժշկագիտության մեջ ձեռք բերած մնայուն արժեքների շարունակականությունը, ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ նոր գաղափարներն ու ձեռքբերումները՝ կնպաստեն համալսարանի կայունության պահպանմանն ու ամրապնդմանը
- Ապահովել ուսանողի մասնագիտական առաջընթացը՝ այն դիտարկելով որպես համալսարանի հաջողություն
- Ձևավորել բարոյագիտական այնպիսի մթնոլորտ, որն ակադեմիական փոխհարաբերություններում կնպաստի անհատի բարոյագիտական չափանիշների պահպանմանն ու զարգացմանը
- Աջակցել ուսանողներին՝ գիտակցելու բարոյական վարքագծի կարևորությունը իրենց մասնագիտական հետագա գործունեության, կարիերայի և ողջ կյանքի ընթացքում
- Մշակել բժշկագիտական կրթական ինքնուրույն քաղաքականություն՝ ազգային առանձնահատկությունների և միջազգային չափորոշիչների հաշվառմամբ՝ ապահովելով շարունակական բարեփոխումներ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

1. Մատչելի և որակյալ կրթություն
2. Բարձրորակ գիտամանկավարժական կազմ
3. Ուսանողի առաջընթաց
4. Ակադեմիական ազնվություն և ազատություն
5. Ակադեմիական միջավայր
6. Պատասխանատվություն

Սույն ռազմավարական ծրագիրը Համալսարանի տեսլականն է: Այն երկարաժամկետ (5տ.) ժամանակահատվածում Համալսարանի առաքելության և հիմնական նպատակների իրականացման գործընթացի նկարագիրն է:

Ռազմավարական ծրագիրը ենթարկվում է մշտադիտարկման և կարող է կրել որոշակի բարեփոխումներ՝ նոր իրավիճակին համապատասխան:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանն իր գոյության 100 տարիների ընթացքում տարածաշրջանում ունեցել է կարևոր դերակատարություն:

- 1919 թվականին մի շարք անվանի բժիշկների կողմից կազմակերպված բժշկական դպրոցի հիմքի վրա Հայաստանի կառավարության որոշմամբ, 1920 թվականին ստեղծվում է հանրապետության առաջին բարձրագույն բժշկական կրթօջախը՝ «Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը»:
- 1930 թվականին «Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը» վերակազմավորվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի, 1995 թվականին ինստիտուտին շնորհվել է Համալսարանի կարգավիճակ, որը 1989 թվականից կրում է միջնադարի հայ մեծ բժշկապետ «Մխիթար Հերացու» անունը, իսկ 2014 թվ-ից ստացել է հիմնադրամի կարգավիճակ:
- Համալսարանն իր գոյության 100 տարիների ընթացքում պատրաստել է շուրջ 44.000 բարձրորակ մասնագետ շրջանավարտներ, որոնցից 4900՝ արտասահմանյան երկրների քաղաքացիներ են: Շրջանավարտներից շատերը դարձել են անվանի գիտնականներ, առողջապահության հմուտ կազմակերպիչներ, պետական, հասարակական և մշակութային գործիչներ՝ իրենց ծանրակշիռ ավանդը ներդնելով հանրապետությունում առողջապահության կազմակերպման, հիվանդությունների կանխարգելման և բուժական հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև՝ բժշկագիտության զարգացման բնագավառներում: Ակնառու են նաև Համալսարանի գիտնականների նվաճումները տեսական և գործնական բժշկության ասպարեզներում:

- Համալսարանը հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ միջնադարյան հայ բժշկական դպրոցների ավանդույթներին ու գաղափարներին, այսօր առաջնորդվում է ՀՀ բարձրագույն կրթական համակարգի պահանջներով և, ապահովելով որակավորումների ու եվրոպական տարածքում մասնագիտացումների համընդհանուր համեմատելի աստիճաններ, ինչպես նաև դասախոսների և հետազոտողների համար ստեղծելով տեղաշարժման պայմաններ, քայլ առ քայլ ինտեգրվում է եվրոպական գիտակրթական տարածքին:
- Որակի մշակույթի զարգացման մեխանիզմների ներդրման միջոցով Համալսարանը որդեգրել է որակի շարունակական բարելավման ռազմավարություն:
- Այսօր Համալսարանի բարձրագույն կրթական համակարգը եռաստիճան է՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ինտեգրված կրթական և հետազոտողի կրթական ծրագրերով:
- Համալսարանն իրականացնում է նաև հետբուհական, շարունակական լրացուցիչ կրթական ծրագրեր:
- Համալսարանում գործում են ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական, ռազմաբժշկական, հանրային առողջության և հետդիպլոմային կրթության ֆակուլտետները, 81 ամբիոն և կրթագիտական սիմուլյացիոն կենտրոններ, ինչպես նաև բժշկական քոլեջը և մինչբուհական նախապատրաստական ուսուցման բաժինը:
- Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ֆակուլտետները, ամբիոնները, գիտական կենտրոնները, կլինիկական համալիրները, քոլեջը, գիտական գրադարանը, ուսանողական հանրակացարանը, հրատարակչությունը, ուսումնաարտադրական բազաները և այլն: Համալսարանում գործում են նաև մի շարք ծառայություններ՝ համակարգչային կենտրոններ, մշակութային և սպորտային ակումբներ, սննդի և հանգստի կազմակերպման, ինչպես նաև ուսումնամարզաառողջարարական կենտրոններ:
- Համալսարանի կառավարման մարմիններն են Համալսարանի հոգաբարձու-ների խորհուրդը և գործադիր մարմինը՝ ռեկտորը:

- Ուսանողների ինքնակառավարման մարմինը ուսանողական խորհրդարանն է:
- Համալսարանը միջազգային կապերի ամրապնդման և ընդլայնման բնագավառում համագործակցում է Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Գերմանիայի, Վրաստանի և այլ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:
- Համալսարանն անդամակցում է «Համալսարանների միջազգային ասոցացիա», «Բժշկական կրթության միջազգային ֆեդերացիա», «Ամերիկյան միջազգային առողջապահության ալյանս», «Դեղագետ ուսանողների միջազգային ֆեդերացիա», «Բժիշկ ուսանողների ասոցացիաների միջազգային ֆեդերացիա», «Բժիշկ ուսանողների եվրոպական ասոցացիա» միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև ներգրավված է եվրոպական և միջազգային կրթական ու գիտական բազմաթիվ ծրագրերում
- 2020թ. Համալսարանը 2-րդ անգամ անցել է միջազգային հավատարմագրում ? տարի ժամկետով:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1

Իրականացնել Համալսարանի կառավարման համակարգի բարեփոխումներ, ապահովել ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքեր՝ միտված բժշկական կրթագիտական հայեցակարգի արդիականացմանը, հեռանկարային զարգացմանը և գործընթացների թափանցիկությանը:

Խնդիրները

- Օպտիմալացնել Համալսարանի կառավարման կառուցվածքը՝ միտված ռազմավարական, ընթացիկ ծրագրերի և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը
- Մշակել Համալսարանի առաքելությունից և խնդիրներից բխող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլանավորման ծրագրեր և դրանց իրականացման մշտադիտարկման հստակ մեխանիզմներ
- Իրականացնել ներքին կադրային և գործառույթային աուդիտ՝ աշխատատեղերի նպատակային և արդյունավետ օգտագործման նպատակով
- Ապահովել համալսարանի հոգաբարձուների խորհրդի և կառավարման մյուս մարմինների համագործակցված գործունեությունը
- Ներդնել Համալսարանի գործունեության և ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ և այն հիմք ընդունել Համալսարանի տարեկան գործունեության արդյունքների վերլուծության ու հաշվետվության համար
- Մշակել ռիսկերի կառավարման հայեցակարգ՝ ուղղված տարաբնույթ ռիսկերի նկատմամբ Համալսարանի կայունության ապահովմանը
- Իրականացնել համադրելի բուհ(երի) ընտրություն և բենչմարքինգ
- Բարելավել Համալսարանի իրավական նորմատիվային եռալեզու բազան

- Աջակցել ուսանողների կարիերայի առաջընթացին, մասնագիտական կողմնորոշման և աշխատատեղերի որոնման գործընթացին
- Համապատասխան պայմանների բարելավման միջոցով մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը և դառնալ բժշկական կրթության տարածաշրջանային առաջատար կենտրոն
- Կազմել Համալսարանի ռազմավարական զարգացման ֆինանսական կողմնորոշիչ ցուցանիշներ՝ ըստ ռազմավարական ծրագրում ներկայացված խնդիրների
- Համալսարանի ֆինանսական բյուջեի պլանավորման և վերաբաշխման հիմքում դնել ստորաբաժանումների կարիքների գնահատումը, կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը
- Վերանայել համալսարանի տեղեկատվական և փաստաթղթավորման գործընթացների կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը՝ այն դարձնելով ռազմավարության իրականացման համար առավել մատչելի, ժամանակակից և խնայողական
- Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական, բուժօգնության և սպասարկման ծրագրերի մասնակցության ընդլայնման միջոցով
- Ապահովել շրջանավարտների, այլ շահառուների և Համալսարանի միջև համագործակցությունը՝ կրթական, գիտական, բժշկական, ֆինանսական և այլ բնույթի աջակցությունների շարունակական գործակցության միջոցով
- Բարելավել գիտահետազոտական, կրթական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրի մասնակցության ցուցիչը
- Վերանայել ուսման վարձավճարներն ըստ մասնագիտությունների՝ ելնելով կրթական ծրագրերի իրականացման ինքնարժեքի հաշվարկից և շուկայի պահանջարկի առաջնահերթությունից
- Ընդլայնել Համալսարանի վճարովի ծառայությունների ցանկը

- Մշակել և ներդնել խնայողություններին ուղղված միջոցառումների համալիր
- Համալսարանի տարբեր սոցիալական խմբերի համար ստեղծել նոր ծրագրեր և նյութական խրախուսման մեխանիզմների ներդրմամբ
- Իրականացնել Համալսարանի մասին տեղեկատվության տարածման և թափանցիկության քաղաքականություն

ՆՊԱՏԱԿ 2

Կրթական ծրագրերի և կրթության կազմակերպման ձևերի բարեփոխումների միջոցով ապահովել որակյալ կրթություն՝ բավարարելով աշխատաշուկայի արդի պահանջները և նպաստելով շարժունությանն ու միջազգայնացմանը

Խնդիրները

- Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ այն համապատասխանեցնելով ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին, շնորհվող որակավորումների ակընկալվող արդյունքներին, միջազգային առարկայական հենանիշներին և աշխատաշուկայի արդի պահանջներին
- Ստեղծել ըստ կրթական ծրագրերի խորհուրդներ՝ դրանցում ներառելով համապատասխան դեկանատները, ծրագրերի ղեկավարներին և ծրագրերի կրթության որակի պատասխանատուներին
- Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասին օրենսդրությունը, համալսարանում իրականացրած ուսումնասիրությունները և ընդունած որոշումները, վերանայել կրթական ծրագրերի բաղադրիչները և դրանց հատկացվող կրեդիտային համամասնությունը
- Կրթական ծրագրերի բարեփոխումների հիմքում դնել բազմադիսցիպլինար թեմատիկ ուսուցումը, ապահովել առարկաների ուղղահայաց և հորիզոնական ինտեգրացիան և լրամշակել ուսումնառության վերջնարդյունքները
- Բարելավել ուսուցման գործընթացում հետազոտական բաղադրիչի ներդրման գործընթացը
- Բարելավել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը՝ օգտագործելով գնահատման բազմաբաղադրիչ մոտեցումը և այլ ձևաչափերի կիրառումը
- Շարունակել համալսարանի շրջանավարտների մասնագիտական մակարդակի և կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գործատուների

կարծիքների վերլուծությանգործընթացը՝ ծրագրերի շարունակական վերանայման, արդիականացման և որակի ապահովման նպատակով

- Ստեղծել մեխանիզմներ և չափորոշիչներ՝ կրթական ծրագրերի բովանդակության, կադրային ներուժի ապահովվածության, ուսուցման արդյունքների վերլուծության, ինքնագնահատման և պարբերական մշտադիտարկման ապահովման ուղղությամբ
- Մշակել արտասահմանցի ուսանողների ուսումնագիտական աշխատանքների բարելավմանն ուղղված մեխանիզմներ՝ առանձին ֆակուլտետի և ուսումնագիտական խորհրդի ստեղծման ճանապարհով
- Համալսարանը դարձնել գիտակրթական կենտրոն՝ապահովելով հանրապետության բժշկական համակազմի շարունակական կրթությունը
- Բարելավել կրթության որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգը, այն համապատասխանեցնելով ՈԱԱԿ-ի և բարձրագույն կրթության որակի արժևորման եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշներին
- Իրականացնել կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում
- Ապահովել ուսանողների և դասախոսների շարժունությունը՝ տարածաշրջանի և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի բուհերի հետ համագործակցային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով
- Մշակել և իրականացնել ուսումնական պրակտիկաների բարելավմանն ուղղված միջոցառումների համալիր ծրագիր
- Շարունակել և բարձրացնել դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտների շրջանում առցանց եղանակով իրականացվող հարցումների արդյունավետությունը
- Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար

- Բարձրացնել Համալսարանի և կրթական ծրագրերի կայունությունը, կանխատեսելիությունը և հասանելիությունը՝ նոր տեխնոլոգիաների, հարթակների մշակման և ներդրման միջոցով
- Մշակել օտար լեզուների ուսուցման նոր հայեցակարգ և մեթոդաբանական հիմք՝ լեզուների բազմամակարդակ ուսուցման համար

ՆՊԱՏԱԿ 3

Զարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները և ապահովել ուսանողների համար կրթական անհրաժեշտ միջավայր՝ նպաստելով նրանց կրթական գործընթացի և սոցիալական կարգավիճակի բարելավմանը

Խնդիրները

- Պլանավորել ուսանողների ամենամյա ընդունելությունն ըստ մասնագիտությունների՝ հիմքում դնելով տվյալ մասնագիտության արտաքին և ներքին պահանջի վերլուծությունը և Համալսարանի թողունակությունը
- Ակտիվացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված տեղեկատվական հոսքը, այդ թվում օտարերկրյա ուսանողների շրջանում
- Կատարելագործել մինչհամալսարանական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և կրթական գիտելիքները համալսարանի ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով
- Վերանայել համալսարանի քոլեջի կրթական ծրագրերը՝ նպաստելով նրա շրջանավարտների ներհոսքին դեպի ԵՊԲՀ
- Վերանայել և բարելավել ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականությունը և ընթացակարգերը
- Ընդլայնել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական և այլ աջակցության շրջանակները
- Ընդլայնել և ակտիվացնել կարիերայի կենտրոնի գործունեությունը

- Մշակել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ՝ ապահովելով արդյունքների թափանցիկությունն ու արդյունավետության գնահատումը
- Ընդլայնել սոցիալապես անապահով ուսանողների համալսարանական աջակցության ծրագրերը
- Պարբերաբար անցկացվող հարցումների միջոցով տեղեկանալ Համալսարանում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ ուսանողների կարծիքներին և այն դարձնել քննարկման առարկա
- Խթանել ուսանողների մասնակցությունը համալսարանի մշակույթային կյանքին
- Մշակել ուսանողների լայն հատվածին հետազոտական աշխատանքների մեջ ներգրավելու հստակ մեխանիզմներ
- Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու լաբորատորիաները
- Արդիականացնել տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքները
- Վերանորոգել և արդիականացնել սպորտային դահլիճները
- Ընդլայնել հանրակացարանային բազան
- Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ,
- Զարգացնել համակարգչային օպտիկամանրաթելային ներքին լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը, արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը
- Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ
- Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման և նոր ուսումնական տարածքների կառուցման աշխատանքներ՝ ապահովելով հենաշարժական խնդիրներ ունեցող անձնաց համար հարմարեցված պայմաններ

ՆՊԱՏԱԿ 4

Ապահովել բարձրագույն բժշկական կրթության որակի գլխավոր երաշխավորի՝ մասնագիտական բարձր որակավորմամբ և բարոյական արժեքներով օժտված դասախոսական կազմի առկայություն:

Խնդիրները

- Մշակել և իրականացնել դասախոսական կազմի նորացման փուլային գործընթաց՝ մրցակցային սկզբունքներով
- Կատարելագործել դասախոսների ընտրության գործընթացը՝ սահմանելով կրթական վերջնարդյունքից բխող դասախոսի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները
- Լրամշակել դասախոսական կազմի (ըստ տարակարգերի) ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը
- Բարելավել դասախոսների որակավորման գնահատման ընթացակարգը՝ համալսարանում գործող դասախոսի որակավորման բազմաբաղադրիչ համակարգի չափորոշիչների հստակեցման միջոցով
- Լրամշակել դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակի բարձրացման ծրագրերը՝ օգտագործելով նաև արտասահմանում աշխատող հայ բժիշկների հնարավորությունները,
- Բարձրացնել դասախոսական կազմի շարժունությունը՝ միջհամալսարանական համապատասխան նոր պայմանագրերի կնքման միջոցով: Մշակել չափորոշիչներ՝ ֆինանսական աջակցություն հատկացնելով այն դասախոսներին, ովքեր հնարավորություն ունեն մասնագիտական վերապատրաստում անցնել և/կամ դասախոսություններ կարդալ արտասահմանում
- Մեծացնել գիտական աշխատանքներին տրվող ֆինանսավորումը և համալսարանի ֆինանսական բյուջեում պլանավորել հստակ սահմանված չափաբաժին՝ դասախոսների կողմից կատարվող գիտական աշխատանքների իրականացման համար

- Մշակել դասախոսների աշխատավարձերի բաշխման տարբերակման մեխանիզմ՝ ըստ գործունեության արդյունքի՝ աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման բարձրացման նպատակով
- Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական, հոգեբանական, մասնագիտական և բարոյագիտական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ
- Ընդարձակել իրականացվող սոցիալական ծրագրերի փաթեթը՝ աշխատողների սոցիալական կենսամակարդակի բարելավման նպատակով
- Բացահայտել դասախոսական կազմի կարիքները՝ նրանց շրջանում պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում և մշակել դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր
- Մշակել համալսարանի անձնակազմի առողջության պահպանման և բուժօգնության ապահովման հարցերի նոր մոտեցումներ
- Ստեղծել աշխատանքի նպաստավոր միջավայր և պայմաններ՝ որակյալ կադրային ներուժի պահպանման, բարելավման և համալրման համար

ՆՊԱՏԱԿ 5

Ապահովել համալսարանի գիտահետազոտական ներուժի շարունակական զարգացումը և արդյունավետ օգտագործումը:

Խնդիրները

- Լրամշակել Համալսարանի գիտական գործունեության քաղաքականությունը և ռազմավարությունը՝ հիմքում դնելով Համալսարանի 2018-2028/38 գիտության զարգացման հայեցակարգը և վերջին 5 տարիների հետազոտական գործունեության գնահատումը
- Իրականացնել Համալսարանի գիտական բլոկի կառուցվածքի բարեփոխումներ և լրամշակել դրա առանձին բաղադրիչների (գիտակորդինացիոն խորհուրդ, գիտության վարչություն, ուսանողական գիտական ընկերություն) կանոնակարգերը և ընթացակարգերը՝ հիմքում դնելով լրամշակված ռազմավարությունը
- Բարելավել հետազոտական և ուսումնական գործընթացների կապը՝ փոխկապակցման մեխանիզմների լրամշակման միջոցով
- Լրամշակել դասախոսների և հետազոտողների որակավորման գնահատման համակարգում դասախոսի գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման չափորոշիչներն ու գնահատման արդյունքները՝ առաջնորդվելով գիտաչափական օբյեկտիվ ցուցիչներով
- Ներդնել գիտաչափական ցուցանիշների վրա հենված աշխատողի և ամբիոնի գիտական անձնագրերը և դրանց հիման վրա գնահատել Համալսարանի դասախոսական կազմի հետազոտական արդյունավետությունը
- Ապահովել գերազանցության վրա հենված առաջնահերթությունների ֆինանսավորումը
- Լրամշակել մրցունակության վրա հիմնված գործիքակազմը, որը կապահովի համալսարանական բյուջեում հետազոտողների և դասախոսների հետազոտական նախաձեռնությունների, գիտական գործուղումների մեկնելու, միջազգային գիտական պարբերականներում գիտական աշխատանքների արդյունքները հրապարակելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներիավելացումը
- Ապահովել համալսարանական հիմնական գերակա գիտական ուղղություններով նյութատեխնիկական բազայի զարգացումը՝ վերանորոգելով և վերազինելով առկա

լաբորատոր-տեխնիկական բազան՝ հասնելով նոր, գերազանցության վրա հիմնված գիտական կենտրոնի կառուցմանը

- Խթանել գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը՝ արտա-սահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ համատեղ նախագծերի նախաձեռնման, երկկողմանի պայմանագրերի կնքման և կոնսորցիումների միջոցով
- Բարելավել և ապահովել 3-րդ աստիճանի կրթության համար նպաստավոր պայմաններ՝ որպես կարևոր պայման ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքների ստեղծումը
- Խթանել գիտահետազոտական և գիտակրթական ծրագրերում ուսանողների ակտիվ մասնակցությունը՝ որպես կարևոր պայման ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքների ստացումը

ՆՊԱՏԱԿ 6

Ապահովել համալսարանի միջազգայնացման շարունակական գործընթացները ենթակառուցվածքային և ծրագրային մակարդակներում:

Խնդիրները

- Ընդլայնել համագործակցության առկա փորձը Հայաստանի և արտասահմանյան առաջատար բուհերի հետ երկկողմ (բազմակողմ) և պայմանագրերի, համատեղ ֆինանսավորմամբ նախագծերի և բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունների միջև կոնսորցիումների շրջանակներում
- Լրամշակել համալսարանի միջազգային կապերը խթանող քաղաքականությունն ու կանոնակարգերը
- Նպաստել ուսանողների, կլինիկական օրդինատորների (ռեզիդենտների), դասախոսների միջբուհական ակադեմիական տեղաշարժին, զարգացնել ուսումնառության արդյունքների փոխճանաչման և կրեդիտների փոխանցման մեխանիզմները՝ ECTS-ի բազայի հիման վրա
- Ապահովել Համալսարանի մասնակցությունը եվրոպական համալսարանների ընկերակցության, տեղական և միջազգային միջբուհական այլ կազմակերպությունների ու ցանցերի ծրագրերում
- Կրթական բարեփոխումների ծրագրերի շրջանակներում հրավիրել բժշկագիտության տարբեր բնագավառների արտասահմանյան առաջատար մասնագետների՝ Համալսարանում դասախոսություններ կարդալու, կառավարման փորձի փոխանակման, ինչպես նաև կլինիկական գործունեության փորձի և մեթոդների ներդրման նպատակով
- Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը եվրոպական և համաշխարհային բանկի ծրագրերին
- Մշակել միջազգայնացման և արտաքին կապերի արդյունավետության գնահատման ցուցանիշներ, այն դիտարկելով որպես Համալսարանի առանձին ստորաբաժանումների և ամբիոնների աշխատանքի գնահատման (ռեյտինգի) պարտադիր և անհրաժեշտ պայման
- Համալսարանի կայքում ընդլայնել միջազգային փոխանակման ծրագրերի մասին տեղեկատվական դաշտը, լրատվությունը դարձնել բոլորի համար մատչելի և թափանցիկ, պարբերաբար ներկայացնել ծրագրերի գործընթացի մասին բավարար ինֆորմացիա

- Ստեղծել և հայտարարել բժշկագիտական ոլորտի ծրագրեր, որոնք իրենց գրավչությամբ կնպաստեն միջազգային համագործակցությանը և գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացմանը

ՆՊԱՏԱԿ 7

Բարելավել Համալսարանի նյութատեխնիկական բազան՝ հիմքում դնելով ուսումնական ծրագրերի, գիտական առաջնահերթությունների և կլինիկական ծառայությունների որակի ապահովման պահանջները:

Խնդիրները

- Իրականացնել Համալսարանի նյութատեխնիկական բազայի բարելավման քաղաքականություն՝ ըստ ռազմավարական ծրագրում սահմանված առաջնահերթությունների
- Իրականացնել բոլոր մասնաշենքերի տեխնիկական փորձաքննություն և կազմել կառուցման, վերանորոգման և վերակառուցման փուլային ծրագրեր
- Մշակել և ներդնել տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացներն ապահովող համալսարանական համակարգչային ցանց
- Շարունակել ուսանողական հանրակացարանների և ուսումնաարտադրական բազաների բարեկարգումը և ձեռք բերել (կառուցել) նոր ուսանողական կացարան
- Ավելացնել սիմուլյացիոն կենտրոնի թողունակությունը և հագեցվածությունը՝ ուսումնական նոր վարժասարքերի ձեռքբերման միջոցով
- Նորացնել համալսարանի անվտանգության համակարգը
- Օժանդակել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին՝ մշակելով տարբերակված կրթական ծրագրեր և ապահովել համապատասխան սպասարկում
- Մշակել Համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին տրամադրվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ
- Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու լաբորատորիաները
- Արդիականացնել տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքներ
- Վերանորոգել և արդիականացնել սպորտային դահլիճները
- Ընդլայնել հանրակացարանային բազան
- Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ
- Զարգացնել համակարգչային օպտիկամանրաթելային ներքին լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը, արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը
- Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ

- Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման և նոր ուսումնական տարածքների կառուցման աշխատանքներ՝ ապահովելով հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ

ՆՊԱՏԱԿ 8

Զարգացնել հասարակության հետ կապերը, հանրային պատասխանատվության բարձրացումը և բարելավել համապատասխան ծառայությունների համակարգը:

Խնդիրները

- Վերամշակել համալսարանի հանրային կապերի հայեցակարգը

- Վերանայել պետությանը և հասարակությանը Համալսարանի հաշվետվողականության ձևաչափերը և ընթացակարգերը
- Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադիրչները
- Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բարելավել գովազդային գործառույթները
- Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը, մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ապահովելով համալսարանական համապատասխան ծրագրերի մրցունակությունը և բարձրացնել լրացուցիչ կրթական ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը
- Ընդլայնել հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմները և բարելավել մշտադիտարկման համակարգի աշխատանքը
- Բարձրացնել Համալսարանի ինտերնետային կայքի դերը որպես համակողմանի տեղեկատվական գործիք
- Ստորաբաժանումների տեղեկատվական պատասխանատուների միջոցով ներքին և արտաքին շահակիցների հետ բարելավել հետադարձ կապը
- Ընդլայնել հաղորդակցման հնարավորությունները Համալսարանի տարածքում
- Մշակել Համալսարանի գործունեությունը լուսաբանող տեղեկատվական փաթեթներ և ապահովել դրանց մշտական թարմացումը

ՆՊԱՏԱԿ 9

Ապահովել համալսարանական կլինիկաների առաջընթացը՝ միտված կրթական գործընթացի և հանրության առողջության պահպանման բարելավմանը:

Խնդիրները

- Ապահովել համալսարանական կլինիկաներում ուսումնական գործընթացի կազմակերպման օրինակելի մոդել՝ կլինիկական կրթական նորարարական

գործիքների մշակման և ներդրման և լսարանային ֆոնդի ավելացման ճանապարով

- Բարելավել մատուցված բուժական ծառայությունների որակը և պացիենտների բավարարվածության մակարդակը
- Բարելավել համալսարանական կլինիկաների աշխատանքային պայմանները, բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման, անձնակազմի շարունակական կրթության ապահովման միջոցով
- Ապահովել ժամանակակից բժշկական սարքավորումների ձեռքբերման, ախտորոշման և բուժման նոր մեթոդների ներդրման և կիրառման շարունակական գործընթացը
- Ստեղծել պացիենտների համար հարմարավետ և անվտանգ միջավայր
- Ապահովել պացիենտների անձնական տվյալների մշակման գործընթացային բժշկական էթիկայի կանոնները և բժշկական գաղտնիքը
- Ապահովել գործընկերների և մատակարարների հետ փոխշահավետ համագործակցությունը և երկարաժամկետ հարաբերությունների ձևավորումը
- Մշակել և բարելավել ժամանակակից բժշկագիտության և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան կլինիկական ուղեցույցների, գործելակարգերի, ախտորոշման և բուժման չափորոշիչների մշակումը և ներդրումը, բուժօգնության որակի կառավարման համակարգը:

ՆՊԱՏԱԿ 10

Ապահովել Համալսարանի գործունեության բոլոր ոլորտները ներառող և ՊԻՍԲ շրջափուլի տրամաբանությամբ գործընթացների խորքային վերլուծության վրա հիմնված որակի ապահովման համակարգ, որը, գնահատելի և չափելի դարձնելով նպատակների իրականացմանն ուղղված քայլերը, կնպաստի համալսարանի տեսլականի իրականացմանը:

Խնդիրները

- Բարելավել կրթության որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգը, այն համապատասխանեցնելով ՈԱԱԿ-ի և բարձրագույն կրթության որակի արժևորման եվրոպական ընկերակցության (ENQA) ցուցիչներին
- Իրականացնել որակի ապահովման համակարգի կարիքների գնահատում
- Վերանայել և բարելավել կրթական ծրագրերի որակի ապահովման քաղաքականությունը
- Վերամշակել որակի ապահովման փաստաթղթային փաթեթը
- Ընդլայնել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը և ապահովել դրա պարբերականությունը
- Իրականացնել ռազմավարական ծրագրի կատարողականի ամենամյա վերլուծություն՝ համապատասխան ցուցիչների մշակման և ներդրման մջոցով
- Ապահովել ՊԻՍԲ շրջափուլի իրականացումը բոլոր գործընթացների շարունակական մշտադիտարկման միջոցով
- Սահմանել որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները և դրանց ընդգրկումը տարեկան ֆինանսական բյուջե
- Թարմացնել կրթության որակի մշակույթի զարգացմանը և շահակիցների իրազեկմանն ուղղված որակի գործառույթների և դասընթացների ուղեցույցները
- Ապահովել բուհի ինքնագնահատման գործընթացի պարբերականությունը և դրա թափանցիկությունը